ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Մ. Ս. ԳՈՐԲԱՉՈՎԻ ելույթը

կենտրոնական հեռուստատեսությամբ

թանկագին ընկերներ:

Այսօրվա հանդիպման ժամանակ ես կուզենայի ձեզ հետ խոսել ազգամիջյան հարաբերությունների հարցի մասին, այն հարցի, որը, ինչպես ես կարծում եմ, այսօր հուզում է յուրաքանչյուր խորհրդային մարդու:

Դրա ճիշտ լուծումից զգալի չափով կախված են մարդկանց անդորրն ու բարօրությունը, վերակառուցման ճակատագիրը, եթե կուզեք, մեր պետության բախտն ու ամբողջականությունը:

Մեզ բոլորիս, իրոք, չի կարող չմտահոգել, որ վերջին ժամանակներս մերթ այստեղ, մեթր այնտեղ ազգամիջյան հողի վրա ծագում են անհանդուրժողություն, գժտություններ, իսկ երբեմն էլ կոնֆլիկտներ, որոնք մարդկանց հանում են կյանքի բնականոն հունից, իսկ մի շարք դեպքերում վերածվել են մարդկային ողբերգությունների:

Մի՞թե կարելի է անտարբեր և անկարեկից մնալ մեզ մոտ հայտնված գաղթականների ճակատագրի նկատմամբ, մարդկանց դժբախտությունների նկատմամբ, որոնք ստիպված են լքել իրենց օջախները, թողնել ունեցվածքը, աշխատանքը:

Գաղթականների մեջ կան ծերունիներ, կանայք և երեխաներ, որոնք բախտաբեկված են ցմահ: Նրանք միայն ֆիզիկական զրկանքներ չեն կրում: Անհամեմատ ավելի ծանր են բարոյական ցնցումները, որոնք կարող են հետք թողնել մարդկանց մտածելակերպի, վարքագծի և խառնվածքի վրա:

Բռնությունը, որը դառնում է ժողովուրդների թշնամանքի անխուսափելի հետևանք, միշտ էլ չարություն և բարոյազրկություն է ծնել:

Ես արդեն չեմ խոսում այն մասին, որ այս ամենը կոլոսալ կերպով է ազդում ռեգիոնների և ամբողջ երկրի էկոնոմիկայի վրա, հանգեցնում լուրջ նյութական կորուստների:

Երբ անցյալ տարի իրավիճակը սրվեց Լեռնային Ղարաբաղում և կանգնեցին Ստեփանակերտի ձեռնարկությունները (ի դեպ, մեր մասշտաբներով փոքր քաղաքում), դա անդրադարձավ հարյուրավոր ձեռնարկությունների աշխատանքի ռիթմի վրա, ազդեց աշխատավորների բազմաթիվ ընտանիքների բյուջեի վրա, նրանց վնաս պատճառեց:

Մենք խոսում ենք ազգամիջյան բախումների առանձին օջախների մասին: Բայց, եթե չգիտակցենք նման երևույթների ամբողջ վտանգավորությունը, եթե դրանք տարածվեն, ապա մեզ կարող են ընպասել ավելի վատ ժամանակներ:

Բոլոր ազգությունների մարդիկ պետք է գիտենան այդ իրավիճակը, գիտակցեն այն: Անպատասխանատու կարգախոսները, քաղաքական սադրանքը, շեշտը արհեստական դիմակայության և շահերի բախման վրա, որոշ ազգերի կողմից մյուսների դուրսմղման վրա դնելը; նման կարգի կոչերն ու գործողությունները կարող են հանգեցնել համընդհանուր աղետի:

Ներկա սերունդը և մեր սերունդները կանիծեն թե նրանց, ովքեր դրդեցին այդ ուղին բռնել, և թե նրանց, ովքեր ժամանակին չնախազգուշացրին, խելահեղությունից հետ չպահեցին:

Որպես ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ իմ պարտքն եմ համարում նախազգուշացնել հասարակության համար, յուրաքանչյուր ընտանիքի, յուրաքանչյուր մարդու համար ազգամիջյան հարաբերությունների սրման և դրա հետ կապված հետևանքների հարաճուն վտանգի մասին:

Ամեն ոք պետք է ենթարկվի այն երկրի օրենքներին, որտեղ ինքն ապրում է: Միայն դա կարող է երաշխավորել քաղաքացու իրավունքները, անկախ նրա ազգությունից: Եվ այդ իրավունքները պետությունը կպաշտպանի իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով:

Ոչ ոք չպետք է համակերպվի ցանկացած ձևի ազգայնական դրսևորման հետ՝ լինի դա տեղական նացիոնալիզմ թե շովինիզմ: Դրանք նվաստացուցիչ են ամեն մի ազգի համար, վիրավորական և անվայել են մարդկային արժանապատվության տեսակետից:

Չի կարելի համակերպվել նրանց հետ, ովքեր կուզե-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

Մ. Ս. ԳՈՐԲԱՉՈՎԻ ելույթը կենտրոնական հեռուստատեսությամբ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նային ազգամիջյան հարաբերություններում ծագած վեճերն օգտագործել շահադիտական, իսկ երբեմն էլ հանցավոր նպատակներով: Եվ եթե որևէ տեղ իրոք հարկավոր է անհանդուրժողություն, ապա դա նախ և առաջ նրանց նկատմամբ, ովքեր գիտակցաբար ազգամիջյան երկպառակություն են բորբոքում:

Ես արդեն ասել եմ և ուզում եմ կրկնել. դա խաղ է կրակի հետ: Նա, ով բռնել է այդ ուղին, իր վրա անչափ ծանր պատասխանատվություն է վերցնում սեփական ժողովրդի և ամբողջ հասարակության հանդեպ:

Մենք պարտավոր ենք կանգնեցնել իրավիճակի նման զարգացումը: Եվ չպետք է տատանվենք, օրենքների պահանջներին և մարդկանց կենսական շահերին համապատասխան ամենավճռական միջոցներ ձեռնարկելով նրանց դեմ, ովքեր հրահրում են ազգամիջյան բախումներ, սահմանները վերանձնելու, ազգային փոքրամասնություններին արտաքսելու կոչեր են անում:

Այստեղ թողտվություն չի կարող լինել ոչ նրանց նկատմամբ, ովքեր հանցավոր ուղի են բռնել, ոչ էլ նրանց նկատմամբ, ովքեր նպաստում են դրան:

Հիմնվելով անհետաձգելի գործողությունների անհրաժեշտության մասին, չի կարելի ամբողջ աշխատանքը հանգեցնել միայն արտակարգ միջոցառումներին, հրդեհների մարմանը: Մենք, ընկերներ, պետք է ամեն ինչ խոյապես պարզենք և կենսագործենք ազգամիջյան հարաբերությունների առողջացման միջոցառումների համալիր, վերացնենք այն պատճառները, որոնք ընկած են ծագած բարդությունների հիմքում:

Նայելով ճշմարտության աչքերին, պետք է խոստովանել, որ մեր բոլոր ժողովուրդների զարգացման ճանապարհին ձեռք բերված հսկայական նվաճումների հետ մեկտեղ կուտակվել են բավականաչափ պրոբլեմներ, որոնք պահանջում են թե սեռեռուն ուշադրություն և թե անհետաձգելի գործողություններ:

Ծագած դժվարությունների պատճառները միանշանակ չեն:

Հազիվ թե որևէ մեկը կարողանա ժխտել այն վիթխարի վերափոխումները, որոնք տեղի են ունեցել մեր երկրի բոլոր ժողովուրդների էկոնոմիկայում և մշակույթում: Բայց դրանք ծնել են նաև իրենց պրոբլեմները, որոնք երկար ժամանակ չէին նկատվում, կոծկվում էին:

Հակասությունների բարդ հանգույցում միահյուսվել են ազգային պրոբլեմները և այն պրոբլեմները, որոնք էկոնոմիկայի լճացման, մարդկանց սոցիալական կարիքների նկատմամբ անուշադրության հետևվանք են:

Մի ժամանակ տարածված բոլոր ազգերի միաձուլման հիմնադրույթը իրականում հանգեցրեց այն բանին, որ մերձեցման և ինտերնացիոնալացման օբյեկտիվ և ընդհանուր առմամբ առողջ միտումը հակադրվեց ազգային ինքնագիտակցության աճին:

Այսօր մենք քաղում ենք նաև նախորդ տասնամյակներում թույլ տրված ապօրինության պտուղները. իրենց հողերից ամբողջ ժողովուրդների արտաքսումը, փոքրաթիվ ազգերի ազգային շահերի մոռացությունը: Այդ ամենը եղել է և դա չէր կարող անհետևանք անցնել: Եվ նման շեղումների հետևանք են անտարբերությունը ազգային շահերի նկատմամբ, հանրապետությունների, ինքնավարությունների բազմաթիվ չլուծված սոցիալ-տնտեսական պրոբլեմները, երկրի ժողովուրդների լեզվի ու մշակույթի զարգացման ձևախեղումները, ժողովրդագրական իրադրության սրումը և շատ ուրիշ բացասական հետևանքներ, որը վերջին հաշվով լարվածություն ստեղծեց ազգամիջյան հարաբերություններում:

Ամենքիս առջև ծառացած է շատ բարդ խնդիր. այդ հարաբերությունները մտցնել բնականոն, առողջ հունի մեջ: Դա կենսականորեն անհրաժեշտ է:

Եվ մենք պետք է ճիշտ ընտրություն կատարենք, հստակորեն պարզենք, թե ինչ մոտեցումներով պետք է լուծվեն այդ հարցերը:

Ո՞րն է կուտակված պրոբլեմների լուծման բանալին:

Առաջին: Պետք է ղեկավարվել այն հիմնարար սոցիալիստական չափանիշով, որի մասին արդեն խոսվեց XIX կուսակցական կոնֆերանսում. յուրաքանչյուր մարդ, ինչ ազգի էլ որ նա պատկանելիս լինի, պետք է երկրի ցանկացած մասում իրեն զգա լիիրավ քաղաքացի, հնարավորություն ունենա օգտվելու ԽՍՀՄ սահմանադրությամբ երաշխավորված բոլոր իրավունքներից:

Ազգերի և ազգությունների իրավահավասարությունը անխզելիորեն կապված է մարդկանց հավասարության հետ, անկախ նրանց ազգությունից: Սա մարդկային քաղաքակրթության հումանիզմի բարձրագույն սկզբունքն է:

Իսկ այնտեղ, որտեղ չկա այս սկզբունքի ըմբռնում, արդեն տեղի են ունենում և կարող են ծագել նոր դրամատիկ դեպքեր: Առայժմ կոնֆլիկտներն առնչվել են այն շրջաններին, որտեղ որոշ ազգությունների մարդիկ կազմում են փոքրամասնություն և ոչ մեծ հանրություններ:

Իսկ եթե ազգամիջյան երկպառակությունը տարածվի՞, որ ընդգրկի այն ռեգիոնները, որտեղ բնիկ ազգության մարդկանց հետ մեկտեղ բնակվում են ուրիշ ազգությունների միլիոնավոր մարդի՞կ:

Պարզ չէ՞, արդյոք, թե որքան ողբերգական կարող են լինել այդ խելահեղ գժտության հետևանքները: Եվ մենք ինչ օրինակ կծառայենք ուրիշներին, հասյալ մարդկությանը բռնացումից զերծ աշխարհի կոչ անելով:

Երկրորդ: Մենք կարող ենք բարեփոխման հույս ունենալ միայն այն դեպքում, եթե յուրաքանչյուր ազգ, յուրաքանչյուր ժողովուրդ իրեն զգա, ես կասեի, վստահ սեփական տանը, սեփական հողի վրա:

Ուստի և պետք է բոլոր անհրաժեշտ նախադրյալներն ապահովվեն տնտեսական, սոցիալական առաջընթացի, լեզվի և մշակույթի ազատ զարգացման համար, այն միջավայրի պահպանման ու ռացիոնալ օգտագործման համար, որտեղ անցել է նրանց նախնիների կյանքը դարեր շարունակ:

Դա պարզ է, ինչպես պարզ է նաև այն, որ բնիկ ազգության բարօրությունը չի կարող ձեռք բերվել մյուս ազգությունների մարդկանց իրավունքների ու ազատությունների ոտնահարման և մանավանդ դուրսմղման հաշվին, մարդիկ, որոնք իրենց կյանքը, զավակների ու թոռների բախտը կապել են այդ հողի հետ:

Մենք ապրել ենք և կապրենք բազմազգ հանրության մեջ: Սա ճիշտ է երկրի բոլոր միութենական և ինքնավար հանրապետությունների, բոլոր ինքնավար մարզերի և օկրուգների, բոլոր երկրամասերի ու մարզերի համար:

Այսպիսին է մեր բազմազգ Միության յուրահատկությունը: Եվ դրա հետ պետք է հաշվի նստել:

Երրորդ: ԽՄԿԿ Կենտկոմի 1985 թվականի ապրիլյան պլենումից հետո կուսակցությունը և ժողովուրդը հանգեցին այն հետևությանը, որ անհրաժեշտ է իրականացնել բաղաքական ու տնտեսական արմատական ռեֆորմ: Հիմա կյանքը մեզ մոտեցրել է այն բանին, որ նույնքան անհրաժեշտ է նաև խոր վերափոխումներ կատարել խորհրդային ֆեդերացիայում:

Միանգամայն հասկանալի է, որ կպահանջվի դրա հետ կապված բոլոր հարցերի հիմնավոր ուսումնասիրում: Եվ այստեղ հառկավոր է գործել համատեղ: Սա մեր ընդհանուր մտահոգությունն է: Մենք բոլորս շահագրգռված ենք նոանով, որ ընդունվեն լավագույն որոշումներ:

Այդ աշխատանքն սկսվել և ընթանում է լարված: Շուտով կուսակցության ազգային քաղաքականության հարցերը քննարկման առարկա կդառնան ԽՄԿԿ Կենտրոնական կոմիտեի պլենումում: Դրանցով հիմնավորապես կզբաղվեն ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարը և երկրի Գերագույն խորհուրդը:

Այժմ հարկ է ասել ահա թե ինչ: Մտածելով ֆեդերացիայի վերակառուցման մասին, ազգամիջյան հարաբերությունների ներդաշնակեցման մասին, մենք չենք կարող հաշվի չառնել այն իրողությունները, որոնք ձևավորվել են ամբողջ հարյուրամյակների ընթացքում, հատկապես խորհրդային իշխանության տարիներին:

Ֆեդերացիայի կազմում մեր ժողովուրդները տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացման մեծ ուղի են անցել, ձեռք են բերվել, ինչպես ես արդեն ասացի, տպավորիչ արդյունքներ: Այսօր թե յուրաքանչյուր առանձին հանրապետություն և թե մեր ամբողջ ֆեդերացիան ցուցադրում են արդի քաղաքակրթության ակնառու նվաճումներ:

Միության շրջանակներում ամուր միահյուսվել են բոլոր հանրապետությունների սոցիալական շահերը, միասնական ժողովրդատնտեսական համալիր է ձևավորվել ամբողջ երկրի մասշտաբով աշխատանքի բաժանման ու կոոպերացման հիման վրա:

Որքան հարուստ է և պայծառորեն է բարգավաճում յուրաքանչյուր ազգ, այնքան մեր խորհրդային միասնությունն ավելի ամուր է:

Նույնիսկ հաշվի առնելով, որ այդ գործում թույլ են տրվել նաև զգալի թվով սխալներ, որ դրանում կան շտկում պահանջող բացահայտ անհարիրություններ, փաստը մնում է փաստ, որ բոլոր հանրապետությունները, շրջանները իրար հետ կապված են ամենասերտ կերպով:

Այդ կապերը խզել, նշանակում է ողջ-ողջ մորթել: Չի կարելի լավագույնը ոչնչելիս բռնել ստեղծվածի ավերման ուղին, հրաժարվել այն բանից, ինչ արդեն տվել է ֆեդերացիան, և ինչը կարող է բազմապատկվել դրա շրջանակներում:

Ուստիև տնտեսական ներփակության ու հոգևոր մեկուսացման կոչերը պետք է համարել յուրաքանչյուր ժողովրդի, ամբողջ հասարակության առմատական շահերին խորապես խորթ: Դրանց իրագործումը ամենքիս մեծապես հետ կնետեր, վիթխարի նյութական և բարոյական կորուստներ կպատճառեր յուրաքանչյուր ազգի, յուրաքանչյուր մարդու:

Իսկ չէ որ մենք, վերակառուցում սկսելով, զգաղվում ենք նախ և առաջ մեր կյանքի արմատական բարելավմամբ: Եվ դրա համար իրական հնարավորություններ կան:

Համոզված եմ. մեզ հուզող բոլոր հարցերի պատասխանները պետք է որոնել ոչ թե խարխլման՝ միասնության խարխլման մեջ, այլ ֆեդերացիայի վճռական նորացման ճանապարհին, որպեսզի դրան մի տեսակ երկրորդ շընչառություն տանք, լիովին և գործնականորեն իրականացնենք այն սկզբունքները, որոնք դրել է Լենինը խորհրդային հանրապետությունների դաշինքի հիմքում:

Այս բոլոր հարցերը հեռավոր ապագայի գործ չեն: Դրանք պետք է իրենց լուծումը գտնեն քաղաքական ռեֆորմի ներկա փուլում:

Չորրորդ: Խոսելով ազգամիջյան հարաբերությունների մասին, բազմազգ երկրում այս հարցի ամբողջ բարդության մասին, ես կուզենայի ընդգծել մեր հանրապետությունների կոմունիստների ու կոմերիտականների, ամբողջ հասարակության պատասխանատվության միտքը:

Շատ բան կախված է մեր մտավորականությունից, բոլոր հանրապետությունների գիտության ու մշակույթի գործիչներից: Ազգային պրոցեսների վրա նրանց ազդեցությունը վիթխարի է, նրանց խոսքը լսում են ժողովուրդները: Մենք հույս ունենք, որ այդ ազդեցությունը կլինի խելամիտ և բարերար:

Ազգային պրոբլեմներին վերաբերող ամեն ինչ անցնում է մարդու գիտակցության, հոգու միջով: Ահա թե ինչու մեր հասարակության յուրաքանչյուր քաղաքացի պետք է ապրի գամիջյան կրքերի հանդարտեցմանը կոչող իր խոսքասի:

Ներկայումս բառացիորեն ամենքից և յուրաքանչյուրից պահանջվում են այդ հարցերում ծայրահեղ պատասխանատվություն և ազնվություն, և որ գլխավորն է՝ խելամիտ վարմունք և կոնկրետ գործեր:

Բոլոր նրանք, ում համար թանկ են մարդկանց խաղաղությունն ու բարօրությունը, չեն կարող լինել կողմնակի հանդիսատեսներ: Այս հարցերում դիրքորոշումները պետք է լինեն հստակ ու հաստատուն:

Վճռականորեն հակազդեցություն ազգայնականության ամեն տեսակ դրսևորումներին, կարևոր է նրբանկատ և զգայուն լինել ազգային բնույթի բոլոր օրինական պահանջների և իրավունքների նկատմամբ:

Խորհրդային ժողովուրդներին միևնույն ճակատագիրն ունի: Մեր առջև ծագող հարցերը այդ թվում ամենաբարդները, կարող են լուծվել և արդեն լուծվում են դեմոկրատական քննարկման, միմյանց նկատմամբ հանդուրժողության և ուշադրության հիման վրա: Այդ ուղի մենք պարզապես չունենք: Դա հարկավոր է ոչ միայն լավ հասկանալ, այլև համապատասխան կերպով գործել:

Թանկագին ընկերներ: Ես դիմում եմ մեր երկրի բոլոր ազգությունների մարդկանց, ձեզ բոլորիդ: Ես դիմում եմ ձեր մտքին ու սրտին:

Ես կոչ եմ անում մեծագույն պատասխանատվություն հանդես բերել ներկա և ապագա ժամանակների հանդեպ, ամեն ինչ անել ազգամիջյան հարաբերություններում կուտակված պրոբլեմները բարեկամության ու համագործակցության հիման վրա լուծելու և խորհրդային ֆեդերացիան զարգացման լայն ճանապարհ դուրս բերելու համար՝ հանուն մեր ընդհանուր շահերի: